ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

« 22 » « 11 » 2010թ

№-6/3

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2011թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարելով « Տեղական տուրքերի և վճարների մասին » ՀՀ օրենքով և « Տեղական ինքնակառավարման մասին »
ՀՀ օրենքի 16 –րդ հոդվածի 18-րդ կետով
Ավագանին որոշեց .

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Բերքանուշ համայնքում 2011թ. համար սահմանել տեղական տուրքերի և վ ճարների հետևյալ դրույքաչափերը :

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի , շինությունների / ներառյալ ոչ հիմնական / շինարարության /տեղադրման/ թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300մ^2 ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների , ինչպես նաև մինչև 200մ^2 ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10.0 հազ.դրամ :

բ/ սյուն կետի « ա » ենթակետում չնախատեսված օբյեկտների համար :

բա/ 201-ից մինչև 500մ^2 ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 30.0հազ. դրամ:

բբ/ 501-ից մինչև 1000մ^2 ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50.0հազ. դրամ:

բգ/ 1001 և ավելի մ^2 ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 70.0հազ. դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20մ^2 ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3.0հազ. դրամ:

դ/ 20 և ավելի մ^2 ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 5.0հազ. դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման , վերականգնման , արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի / համար ,եթե սահմնված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև 3.0հազ. դրամ:

բ/ բացի օբյեկտի վերակառուցման , ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքից , նախատեսված է նաև կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/ այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքի գործառական նշանակության փոփոխություն՝ ապա բացի սույն կետի « ա » ենթակետով սահմանված դրույքաչափի , կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով :

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / շինարարության կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն , որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման առաջին կետով սահմնված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5.0հազ. դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 4.5հազ. դրամ:

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 4.5հազ. դրամ:

5. Համայնքի տարածքում.

ա/ Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմնվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ :

բ/ Հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմնվում է 150.0հազ. դրամ :

6. Համայնքի տարածքում առևտրի , հանրային սննդի , զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները , բաղնիքները / սաունաները / , խաղատները ժամը 24^{00}–ից հետո աշխատելու թույլտվության համար , տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար 25.0հազ. դրամ

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 80.0հազ. դրամ

գ/ բաղնիքների /սաունաների/ համար 200.0հազ. դրամ

դ/ խաղատների կազմակերպման համար 500.0հազ. դրամ

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար 250.0հազ. դրամ

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար 100.0հազ. դրամ

7. Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայության իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 6.0հազ. դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1.0հազ. դրամ :

9. Հիմք ընդունելով « Տեղական տուրքերի և վճարների մասին » ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանել հետևյալ վճարների տեսակները՝

ա/ համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և նման այլ աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վարձավճար սահմանել 1.0հազ. դրամ :

բ/ համայնքի կողմից աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 1.0հազ. դրամ :

Որոշման 1-ից 3-րդ կետերում սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0.5 գործակիցը :

Ավագանու անդամներ՝

Հ. Ռուշանյան ---------- ----------

Ն. Գրիգորյան ---------- ----------

Ժ. Սարգսյան ---------- ----------

Լ.Մնացականյան ---------- ----------

Համայնքի ղեկավար Մ.Գ.Հայրապետյան